ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ ԱՄՍԱԳԻՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՏՎՅԱԼ ԱՄՍՈՒՄ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ԻԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

ԺԱՄԱՆԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #39

ԱՍՈՒԼԻՍ «ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2019 թ.-ի նոյեմբերի 14-ին հայ-գերմանական համագործակցության շրջանակներում Երևան էին ժամանել Բավարիայի երիտասարդական խորհրդի մեր գործընկերները: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ աշխատակիցները և գերմանացի հյուրերը հանդիպում ունեցան Երևանում Գերմանիայի դեսպանի հետ:Հանդիպման ավարտից հետո մասնակիցները հյուրընկալվեցին «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում, որի ընթացքում միմյանց ծանոթացրին իրենց աշխատանքների և ծրագրերի մասին:Օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ «Հայաստանում երիտասարդական ոլորտի հիմնախնդիրները և մարտահրավերները» հանդիպում-քննարկումը տեղի երիտասարդների և նրանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-երի ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին երիտասարդական հիմնախնդիրները, զարգացման հեռանկարները, խոչընդոտները և մարտահրավերները, ինչպես նաև փոխանակման ծրագրերի կարևորությունը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

2019 թ.-ի նոյեմբերի 21-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակ այցելեց Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության գլխամասային գրասենյակի, ԱՀԿ տարածաշրջանային գրասենյակի աշխատակիցներից և միջազգային փորձագետներից բաղկացած թիմը:
Հանդիպման նպատակն էր ծանոթանալ ՆՍՀԿ-ի կողմից իրականացվող գործունեությանը ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում, մասնավորապես՝ խոցելի խմբերի շրջանում իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերին, տրամադրվող ծառայություններին, գրանցված ձեռքբերումներին, ինչպես նաև առկա խնդիրներին:
Հանդիպումը անցավ բուռն քննարկումների, հարց ու պատասխանների մթնոլորտում, որի ընթացքում շոշափվեցին ՄԻԱՎ-ի ոլորտում տրամադրվող ծառայությունները և դրանց շարունակականության խնդիրը ՀՀ-ում, ոլորտում առկա այլ հիմնահարցերը և խնդիրները, անհրաժեշտ փոփոխություններն ու բարեփոխումները:Հանդիպման ավարտին ԱՀԿ ներկայացուցիչները զրույց ունեցան ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շահառու համայնքի ներկայացուցիչների հետ:

ՀԵՏԱՊՆԴԻ՛Ր ՎԻՐՈՒՍԸ, ՈՉ ՄԱՐԴԿԱՆՑ

2019 թ.-ի նոյեմբերի 23-ին, տեղի ունեցավ «Հետապնդի՛ր վիրուսը, ոչ մարդկանց», խորագրով արշավը, որի շրջանակներում հայտնի մարդիկ, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչներ, տարբեր խմբերի ներկայացուցիչներ իրենց աջակցությունն են հայտնում արշավին և կոչ անում վերջ դնել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականության ու խարանին: Արշավն իրականացվում էր «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ի, ինչպես նաև ՀՀ-ում Գլոբալ հիմնադրամի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումների համակարգող հանձնաժողովի ներքո գործող «Համայնք, իրավունք, գենդեր» աշխատանքային խմբի նախաձեռնությամբ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան ընդառաջ:
Նախաձեռնությանը միացավ նաև «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն: Այսպիսով՝ արշավի մասնակիցները հնարավորություն ունեցան նաև լուսանկարվելու «Հետապնդիր խարանը, ոչ թե մարդկանց» խորագրով պաստառի մոտ և իրենց համերաշխությունը հայտնելու արշավին:

2019 թ.-ի նոյեմբերի 27-ին Գյումրի քաղաքում «SUS և ԿՍԿ անձանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ դասընթացներ Գյումրի քաղաքի SUS և ԿՍԿ անձանց շրջանում: SUS-երի դասընթացի թեմաներն էին՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելում և թեստավորման կարևորություն», «Առողջության իրավունք» և «Սեռականություն», որոնք համապատասխանաբար ներկայացվեցին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ առողջապահական ծրագրերի օգնական Լևոն Չիլինգարյանի, ՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանի և ՀԿ ծրագրերի համակարգող Հմայակ Ավետիսյանի կողմից: ԿՍԿ-երի համար նախատեսված դասընթացը ներառում էր «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելում և թեստավորման կարևորություն», «Առողջության իրավունք» և «Առաջնորդություն» թեմաները, որոնք համապատասխանաբար ներկայացվեցին փորձագետներ Լևոն Չիլինգարյանի, Շուշան Խնկոյանի և Հմայակ Ավետիսյանի կողմից: Դասընթացները հագեցած էին ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաժիններից, ակտիվ հարց ու պատասխանից և քննարկումներից: Նշված խմբերի կարողությունների զարգացումը և հզորացումը դասընթացների և հանդիպում-քննարկումների միջոցով շարունակական բնույթ է կրելու: Դասընթացները կազմակերպվել էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում են ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերից:



ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ SUS ԵՎ ԿՍԿ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

2019 թ.-ի նոյեմբերի 26-ին Վանաձոր քաղաքում «SUS և ԿՍԿ անձանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ դասընթացներ Վանաձոր քաղաքի SUS և ԿՍԿ անձանց շրջանում: SUS-երի դասընթացի թեմաներն էին՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելում և թեստավորման կարևորություն», «Առողջության իրավունք», «Սեռականություն», որոնք համապատասխանաբար ներկայացվեցին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ առողջապահական ծրագրերի օգնական Լևոն Չիլինգարյանի, ՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանի և ՀԿ ծրագրերի համակարգող Հմայակ Ավետիսյանի կողմից:

ԿՍԿ-երի համար նախատեսված դասընթացը ներառում էր «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելում և թեստավորման կարևորություն», «Առողջության իրավունք» և «Առաջնորդություն» թեմաները, որոնք համապատասխանաբար ներկայացվեցին փորձագետներ Լևոն Չիլինգարյանի, Շուշան Խնկոյանի և Հմայակ Ավետիսյանի կողմից:Դասընթացները հագեցած էին ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաժիններից, ակտիվ հարց ու պատասխանից և քննարկումներից:Նշված խմբերի կարողությունների զարգացումը և հզորացումը դասընթացների և հանդիպում-քննարկումների միջոցով շարունակական բնույթ է կրելու:Դասընթացները կազմակերպվել էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում են ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՏՐԱՄԱԴՐԻ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ԻՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 29.01.2019թ.-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ եռօրյա ժամկետում հայցվորի գրությանն ըստ էության պատասխանելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Ճանապարհային ոստիկանության կողմից չի ներկայացվել հայցադիմումի պատասխան և դատական նիստերին չի ապահովվել ներկայացուցչի մասնակցություն: Արդյունքում, Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը «Տեղեկատվական ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ ունենալով հայցվորի կողմից վերջինիս ուղղված հարցմանը պատասխանելու պարտավորություն, չի կատարել այն, որպիսի պայմաններում դատարանը որոշում է կայացրել պարտավորեցնել պատասխանողին եռօրյա ժամկետում ըստ էության պատասխանել հայցվորի 29.01.2019թ. թիվ NG-02-015-1901 գրությանը:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Դատարանը որոշել է Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հօգուտ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի բռնագանձել հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը և հայցվորի ներկայացուցչի վճարը: ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. 2018թ. հոկտեմբերի 27-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության /այսուհետ՝ Հայցվոր/ գտնվելու վայրի հասցեում /ք. Երևան, Թումանյան 41/ կայանված է եղել Հայցվորին պատկանող KIA մակնիշի AM 602 LP 61 պետհամարանիշի ավտոմեքենան: Երեկոյան ժամը 23:30-ից 00:30-ի սահմաններում անհայտ ավտոմեքենան հարվածել է Հայցվորի ավտոմեքենային ու դիմել փախուստի: Կատարվածը տեսագրվել է մոտակայքում տեղադրված տեսախցիկի կողմից:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ ԱՄՍԱԳԻՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՏՎՅԱԼ ԱՄՍՈՒՄ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ԻԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

Երեկոյան ուշ ժամի հետևանքով, հասցված վնասը նույն օրը Կազմակերպության նախագահ՝ Ս. Գաբրիելյանը չի նկատել: Հաջորդ օրը միայն լավ լուսավորության պայմաններում, ակնհայտ երևացել է հասցված վնասը, որից հետո վերջինս դիտել է տեսագրությունը: 2018թ. հոկտեմբերի 29-ին Ս. Գաբրիելյանը ՀՀ Ճանապարհային ոստիկանություն ներկայացրել է հաղորդում փաստի վերաբերյալ՝ տրամադրելով տեսագրության կրիչը: Դրանից հետո շուրջ 3 ամիս ոչ մի տեղեկություն կատարվածի վերաբերյալ՝ քննության, մեղավորին հայտնաբերելու, ինչպես նաև այլ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ Կազմակերպությունը չի ստացել: Դա չի հաջողվել նաև Ս. Գաբրիելյանի՝ անձամբ ոստիկանություն կրկին այցելելուց հետո: Մինչդեռ, տեսագրությունից պարզ է դառնում, որ ճանապարհային ոստիկանություն է ժամանել դեպքի վայր, քանի որ բացի Հայցվորին պատկանող ավտոմեքենայից, անհայտ վարորդը նաև հարվածել է դիմացը կանգնած մյուս մեքենային: Ստիպված 29.01.2019թ. ՀՀ Ճանապարհային Ոստիկանությանն /այսուհետ՝ Պատասխանող/ է ուղարկվել թիվ NG-02-015-1901 գրությունը՝ խնդրանքով տրամադրելու տեղեկատվություն գործի ընթացքի վերաբերյալ: Սակայն հարցմանն այդպես էլ ո՛չ գրավոր, ո՛չ բանավոր պատասխան չի տրվել:

LIFE #12

2019 թվականի դեկտեմբերի 8-9-ը տեղի ունեցավ «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՖ-12 արտագնա տեղեկատվական հարթակը, որն այս անգամ նախատեսված էր սկսնակ ակտիվիստների համար:

ԼԱՅՖ-12 արտագնա տեղեկատվական հարթակի նպատակն է համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել սեռականության և առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:

Արտագնա տեղեկատվական հարթակի առաջին օրը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբան/ փաստաբան, «Առողջության իրավունք» ծրագրի Իրավական խոչընդոտների հաղթահարման մասնագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև ՀՀ բժշկական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր իրավագիտակցության և խոցելի խմբերին առնչվող բժշկական գիտելիքների ցածր մակարդակին, բժշկական անձնակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքին և խտրականության հաղթահարման մեխանիզմներին առնչվող իրավական կարգավորումները:Տեղեկատվական հարթակի երկրորդ օրը ՆՍՀԿ ծրագրերի համակարգող, սեռականության փորձագետ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց «Սեռականություն» թեման, որի շրջանակներում մասնակիցները խմբային խաղերի, ոչ ֆորմալ կրթական միջավայրի միջոցով ծանոթացան բարդ թեմային, բացահայտեցին սեռականության կոմպոնենտները, տարբերեցին մի շարք կարևոր տերմիններ:Հանդիպման ողջ ընթացքն ուղեկցվում էր տեսահոլովակների դիտմամբ և գործնական աշխատանքներով:

ԼԱՅՖ-12 արտագնա տեղեկտվական հարթակի ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայագրեր:«Առողջության իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ԽԱՐԱՆԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ՀՀ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2019թ.-ի դեկտեմբերի 17-ին տեղի ունեցավ «Խարանի և խտրականության արգելք» թեմայով դասընթաց քննարկում ՀՀ 10 պոլիկլինիկաների ներկայացուցիչների հետ: Դասընթացը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից՝ թրեյնինգային մոդուլի հիման վրա, որը մշակվել է Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերի հաշվին Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի ֆինասական աջակցությամբ իրականցվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում: Դասընթացի նպատակն է բարձրացնել ՀՀ բուժաշխատողների իրազեկությունը և հաստատել համագործակցություն խոցելի խմբերի հանդեպ խարանի և խտրականության վերացման հարցերում: Դասընթացի փորձագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց կարծրատիպերի, խարանի և խտրականության սահմանումները, կարծրատիպերից անցումը խտրականության, խտրականության պաշտպանված հիմքերը և տեսակները, մասնագիտական էթիկա և հանդուրժողականություն, խտրականությունից զերծ որակյալ ծառայությունների

մատուցումը հասարակության բոլոր խմբերի նկատմամբ: Դասընթացի ընթացքում ներկայացվեցին ու քննարկվեցին նաև պատշաճ տերմինաբանությունը և հանդուրժողականությունը բուժհաստատություններում: Դասընթացն ուղեկցվեց ակտիվ քննարկումներով, ինտերակտիվ վարժանքներով և տեսահոլովակների դիտումով:

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ» ԱՄՓՈՓԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ «Մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում:Մարտահրավերներ և ձեռքբերումներ» ամփոփիչ հանդիպում-քննարկումը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) ֆինանսավորմամբ՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերի հաշվին:

Քննարկմանը մասնակցում էին շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ՝ Առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի հանրապետական կենտրոնի ներկայացուցիչ ոլորտային ՀԿ ներկայացուցիչներ, փաստաբաններ, իրավապաշտպաններ, համայնքի ներկայացուցիչներ և ակտիվիստներ: Քննարկման սկզբում բացման խոսքով ելույթ ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ կարևորելով բոլորի մասնակցությունը միջոցառմանը, հաշվետվողականությունը և թափանցիկ աշխատանքը: Ողջույնի խոսքից հետո «Առողջության իրավունք» ծրագրի համակարգող Ալինա Միրզոյանը ներկայացրեց ծրագրային ուղղությունները և գործողությունները, հասած արդյունքները, ֆինանսական հաշվետվությունը, որից հետո խոսքը փոխանցեց ծրագրի իրավաբան Անահիտ Մկրտչյանին: Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց ծրագրի իրավական կոմպոնենտները՝ առողջության իրավունքի խախտման դեպքերը, դրանց վերաբերյալ տարեկան զեկույցները, ԼԳԲՏ անձանց վերաբերյալ օրենսդրական դաշտի վերլուծությունը, Հայաստանում սեռափոխության և գենդերային ինքնության ճանաչման հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև ՄԱԿ-ին և խոշտանգումների կոմիտեին ներկայացված զեկույցները: Այնուհետև խոսեց իրավաբան, ծրագրի փորձագետ Շուշան Խնկոյանը ներկայացրեց «ՄԻԱՎ վարակի կանխարգելման ոլորտում SUS և տրանս անձանց հետ աշխատող ՔՀԿ-երի ֆինանսավորման աղբյուրները կարգավորող ազգային օրենսդրության վերլուծություն» զեկույցը՝ անդրադառնալով ոլորտում առկա բացերին և կարգավորումների կարևորությանը: Հանդիպման ավարտին մասնակիցները ոչ ֆորմալ քննարկումների, հարցուպատասխանի միջոցով ակտիվ երկխոսություն ձևավորեցին, կարևորեցին նման հանդիպում-քննարկումների, միմյանց ծրագրերի մասին իրազեկվելու և հաշվետվողականության կարևորությունը:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ ՈՂՋ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2019 թվականի դեկտեմբերի 27-ին Երևանում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ողջ աշխատակազմի ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀԿ գրասենյակային և աութրիչ աշխատողները , դասընթացավարներ և փորձագետներ, ՀԿ-ին ծառայություն մատուցողներ, ինչպես նաև համագործակից ՀԿ-ների ներկայացուցիչներ:Ընդհանուր ժողովի բացման խոսքով հանդես եկավ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիլելյանը: Նա շատ հակիրճ ներկայացրեց ՀԿ նոր ռազմավարական պլանում ներառված ուղղությունները, որոնց հետևելով՝ կազմակերպությունը պետք է շարժվի առաջիկա հինգ տարիների ընթացքում: Ֆինանսական հարցերով ՀԿ նախագահի օգնական Արման Սահակյանը ներկայացրեց կազմակերպության 2019թ-ի ֆինանսական հաշվետվությունը:Ծրագրերի համակարգողներ Արտյոմ Մովսեսյանը, Ալինա Միրզոյանը և Հմայակ Ավետիսյանը ներկայացրին համապատասխանաբար առողջապահական, մարդու իրավունքների և շահերի պաշտպանության և երիտասարդական ծրագրերը, անցնող տարվա ձեռբերումները և գալիք տարում նախատեսված աշխատանքները:Ժողովի ամփոփումից և հարց ու պատասխանից հետո շնորհակալագրեր ստացան այն աութրիչները , որոնք բարեխիղճ ու արդյունավետ աշխատանք էին ցուցաբերել տարվա ընթացքում, իսկ պատվոգրերի արժանացան այն աութրիչները, որոնք ցուցաբերել էին նաև բարձր կատարողական իրենց աշխատանքներում:Հանդիպումը անցավ գործընկերային ջերմ ու հաճելի մթնոլորտում:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2020 թվականի հունվարից շարունակվեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի համագործակցությունը, որի շրջանակներում ՆՍՀԿ փորձագետները «Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներ», «Խոշտանգումներից զերծ մնալու իրավունք», «Խոսքի ազատություն/սահմանափակումներ», «Հավաքների ազատություն» թեմաներով դասընթացներ են անցկացնում կրթահամալիրի վերապատրաստման ֆակուլտետում:

և «Խոսքի իրավունք/սահմանափակումները»: Դասընթացի փորձագետն էր ՆՍՀԿ իրավաբան, Համագործակցության շրջանակներում 2020թ.-ի հունվարի 21-ին և 22-ին կազմակերպվել է երկու դասընթաց վերը նշված թեմաներով կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների շրջանում: Վերապատրաստման առաջին դասընթացին՝ հունվարի 21-ին, ՆՍՀԿ փորձագետ Արա Ղազարյանը կրթահամալիրի ուսումնական կենտրոնի վերապատրաստման ֆակուլտետում ներկայացրեց «Խոշտանգումներից զերծ մնալու իրավունք» թեման: Հունվարի 22-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում փաստաբան Անահիտ Մկրտչյանը: Վերապատրաստումն իրականացվում էր ոստիկանության համակարգում արդեն իսկ ընդգրկված 16 ներկայացուցչի համար: Դասընթացներն անցան ակտիվ քննարկումների, հարց ու պատասխանի մթնոլորտում: Երկու դասընթացների ավարտին մասնակիցներին հանձնվեցին մասնակցության վկայագրեր: Նախատեսվում է նաև հետագա համագործակցություն այս ձևաչափով:

ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

2019 թվականի ավարտին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի ֆինանսական աջակցությամբ հայտարարել էր փոքր դրամաշնորհային ծրագրերի բաց մրցույթ: Առաջարկվող ծրագրերի նպատակը պետք է լիներ համայնքային զարգացումը, երիտասարդական որևէ հիմնախնդիր հասցեավորելը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը ստացել էր ավելի քան 100 ծրագրային առաջարկ Հայաստանի բոլոր մարզերից: Մրցույթի հանձնաժողովը երկար ու դժվարին գործընթացի արդյունքում առանձնացրեց քսան լավագույններին, որոնք էլ արժանացան դրամաշնորհներին:

2020 թվականի հունվարի 14-ին տեղի ունեցավ փոքր դրամաշնորհային ծրագրերի նախապատրաստական հանդիպումը հաղթած ՀԿ-երի կամ նախաձեռնությունների ներկայացուցիչների հետ:Հանդիպման բացման խոսքով հանդես եկավ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, որը ներկայացրեց կազմակերպության գործունեությունը, ուղղությունները, ինչպես նաև շնորհավորեց մասնակցիներին հաջողված ծրագրային առաջարկների համար: Կազմակերպության ֆինանսական մենեջեր Արման Սահակյանը ներկայացրեց հաշվետվությունների կարգը, անհրաժեշտ ֆինանսական փաստաթղթերի ցանկը, վերանայվեցին ծրագրերի բյուջեները: ՀԿ երիտասարդական ծրագրերի համակարգող Հմայակ Ավետիսյանը

ներկայացրեց ծրագրերի իրականացման ընթացքը, գործողությունների հերթականությունը, ծանոթացրեց մասնակիցներին իրենց ծրագրային մենթորների հետ, ինչպես նաև պատասխանեց հանդիպման մասնակիցների բոլոր հարցերին:Հանդիպման ավարտին մասնակիցների ստորագրեցին պայմանագրերը, իսկ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակազմը բոլորին մաղթեց ծրագրերի հաջող ընթացք:

2020 թվականի հունվարի 24-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ «Երջանիկ լինելու իրավունքը» ֆիլմի դիտումը: Միջոցառմանը ներկա էին համայնքի ներկայացուցիչներ, համախոհներ, իրավապաշտպաններ:Ֆիլմը նկարահանվել է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի (ԵԿՈՄ) կողմից, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերի հաշվին:



«ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ»

«Երջանիկ լինելու իրավունքը» ֆիլմը պատմում է տրանսգենդեր կին Մոնիկայի կյանքի մասին, թե ով է ինքը, երբ է հասկացել,որ իրեն հակառակ սեռի դերում է զգում, ինչպես են ընդունել հարազատները այդ փաստը: Մոնիկան խոսում է հասարակության կողմից խտրականացված լինելու, մերժվելու, անընդմեջ բռնության ենթարկվելու մասին: Նա հույս է հայտնում, որ իր պայքարը հանուն հավասարության մի օր կտա իր պտուղները, և հասարակությունը ստիպված կլինի հաշտվել այն մտքի հետ, որ տրանս* անձինք ևս հասարակության մի մասն են, լիիրավ անդամը և իրավունք ունեն աշխատանքի, ընտանիք կազմելու և երջանիկ լինելու...Մոնիկան խոսում է հորմոնաթերապիայի և սեռափոխության մտադրության մասին:

Ֆիլմում նաև խոսում են իրավապաշտպաններ, իրավաբան և սեռականության փորձագետ, որոնք իրենց մասնագիտության տեսանկյունից են ներկայացնում խնդիրը:

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բավարիայի երիտասարդական խորհուրդի և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի միջև ստորագրված փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում թվով 16 ենթադրամաշնորհներ տրամադրվեցին Հայաստանի պետական և ոչ պետական կազմակերպություններին:

Ստորև կարող եք ծանոթանալ ենթադրամաշնորհներ ստացած կազմակերպությունների ցանկին՝

«Բազմազանություն» ՀԿ

Ծրագրի անվանումը՝ Կարողությունների զարգացում

Ծրագրի ղեկավարը՝ Արտակ Առաքելյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Դարբաս» նախաձեռնող խումբ

Ծրագրի անվանումը՝ Dar Y Bus

Ծրագրի ղեկավարը՝ Սոսե Զաքարյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Թույլ տուր, որ լույսդ շողա» Նախաձեռնող խումբ

Ծրագրի անվանումը՝ Լուսաշողը՝ հանրային գրադարան

Ծրագրի ղեկավարը՝ Նարինե Գալստյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Գրադարան-հակասրճարան» Նախաձեռնող խումբ

Ծրագրի անվանումը՝ Կախույթ անտիկաֆեին

Ծրագրի ղեկավարը՝ Մանե Մինասյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Դիլիջանի համայնքային կենտրոն» Նախաձեռնող խումբ

Ծրագրի անվանումը՝ Դիլիջանի երիտասարդ վերափոխիչներ

Ծրագրի ղեկավարը՝ Թագուհի Խառատյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում» ՀԿ

Ծրագրի անվանումը՝ Խաղաղաշինություն

Ծրագրի ղեկավարը՝ Լուսինե Քոսակյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Վանաձորի N 35 ներառական մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ծրագրի անվանումը՝ Զարգացնող միջավայր

Ծրագրի ղեկավարը՝ Արմաիդա Աբովյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Սպիտակի ակտիվ երիտասարդներ» նախաձեռնող խումբ

ԱԿՏԻՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ծրագրի անվանումը՝ Զբոսայգու բարեկարգում

Ծրագրի ղեկավարը՝ Էդգար Քոչարյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Շենիկի երիտասարդ ակտիվիստներ» նախաձեռնող խումբ

Ծրագրի անվանումը՝ ՏնաՇեն զարգացման ակումբ

Ծրագրի ղեկավարը՝ Անուշ Մկրտչյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Արաքս կենտրոն» բարեգործական ՀԿ

ԱՐԱՔՍ ԿԵՆՏՐՈՆ ARAKS CENTER

Ծրագրի անվանումը՝ Մեր պատմության մոլորակը

Ծրագրի ղեկավարը՝ Ալլա Խաչատրյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Քմյունիթի սենթր ֆոր դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ

Ծրագրի անվանումը՝ Քաղաքացիական իրազեկվածություն

Ծրագրի ղեկավարը՝ Հասմիկ Ազիզբեկյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Գյումրու Առաջընթաց» Քաղաքացիական Հասարակության Զարգացման Կենտրոն ՀԿ

PROGRESS OF GYUMRI NGO
Civil Society Development Center

Ծրագրի անվանումը՝ Մեդիա հաղորդում

Ծրագրի ղեկավարը՝ Հասմիկ Մխիթարյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ դեկտեմբերի 1, 2019 - փետրվարի 15, 2020

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

PEACE DIALOGUE

Ծրագրի անվանումը՝ Ճիշտ օրինակ

Ծրագրի ղեկավարը՝ Էդգար Խաչատրյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ դեկտեմբերի 1, 2019 - փետրվարի 15, 2020

«Միացյալ ուղի» ՀԿ և «Երիտասարդների միացյալ գույներ» ՀԿ

UNITED WAY
ՄԻԱՑՅԱԼ ՈՒՂԻ

Ծրագրի անվանումը՝ YLOW երիտասարդական ճամբար

Ծրագրի ղեկավարը՝ Սևան Շիրվանի

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Երաշխիք» Քաղաքացիական Հասարակության Կենտրոն ՀԿ և «Պայծառ ապագա» նախաձեռնություն

Ծրագրի անվանումը՝ Առաջնորդության դպրոց

Ծրագրի ղեկավարը՝ Սամվել Պետրոսյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

«Տեղեկացված և հավասար» նախաձեռնություն և «Իրավունք, ոչ թե լավություն» նախաձեռնություն

it's your right

Ծրագրի անվանումը՝ Ամեն աշխատանք աշխատանք է

Ծրագրի ղեկավարը՝ Սարգիս Այվազյան

Ծրագրի իրականացման ընթացքը՝ հունվարի 15-փետրվարի 15

Ծրագիրը իրականացվում է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Բավարիայի երիտասարդական խորհրդի (BJR) ֆինանսական աջակցությամբ:

2020 թ.-ի դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն հրապարակել է Հայաստանի համար հարցերի ցանկը:
Կոմիտեն իր հարցերի ցանկում անդրադարձել է նաև 2019թ.-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և ԵԿՈՄ-ի կողմից ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտե ներկայացված զեկույցում բարձրաձայնված խնդիրներին, մասնավորապես.

կետ 17. Անդրադառնալով կոմիտեի նախորդ դիտարկումներին (կետ 31-32), խնդրում ենք տրամադրել թարմացված տեղեկություն, (c) ինչ քայլեր են ձեռնարկվել բանտերի ղեկավարության հեղինակության բարձրացման, քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի ազդեցությունը և ոչ ֆորմալ հիերախիան նվազեցնելու, հոմոսեքսուալ բանտարկյալների և սեռական բնույթի հանցագործություն գործած անձանց նկատմամբ խտրականությանը և բռնությանը վերջ դնելու ուղղությամբ:

COMMITTEE AGAINST TORTURE
UNITED NATIONS

Հարկ է նշել, որ այս խնդրի լուծմանն աջակցելու նպատակով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն դեռևս 2018-2019 թթ.-ին իր կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բազմիցս համագործակցության առաջարկներ է ներկայացրել ՀՀ Արդարադատության Նախարարությանը՝ ՀՀ Ան քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչների համար վերապատրաստման դասընթացներ իրականացնելու նպատակով: Դասընթացների համար ընտրված են եղել մարդու իրավունքներ, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, խարանի և խտրականության կանխարգելում, խոշտագում թեմաները, հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներում տարբերակված և խտրական վերաբերմունքի առկայությունը:

Չնայած Կազմակերպության կողմից ցուցաբերած նախաձեռնողականությանը, ՀՀ արդարադատության նախարարությունը մինչ օրս որևէ քայլ չի ձեռնարկել համագործակցելու և Կազմակերպության կողմից անցկացվող դասընթացներին մասնակցելու ուղղությամբ:«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ցուցաբերելու է շարունակական հետևողականություն և մասնակցություն Հայաստանում խոշտանգումների կանխարգելմանն ուղղված գործընթացներում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Իրավաբանական խորհրդատվություններ և փաստաբանական ծառայություններ

ՀՈՒՆՎԱՐ 2020

19 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

12 ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Քրեական գործ	6
Քաղաքացիական	3
Վարչական	3



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում իրավախորհրդատվություն է տրամադրվում յուրաքանչյուր աշխատանքային օր:

Տեղեկացնում ենք, որ ՆՍՀԿ-ն իրականացնում է ԼԳԲՏԻ-ի համայնքի ներկայացուցիչների շրջանում անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրում: Գրասենյակում ընդունելություն կազմակերպվում է ժամը 11:00-17:00 միջակայքում:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՄԻԱՎ-ի կանխարգելումը ՀՀ առավել ռիսկային խմբերի շրջանում

2019 թվականին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած շահառուների վիճակագրական տվյալներ

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

ՏՍՏ	4231
ԿՍԿ	1743
Տրանս	62
ԹՆՕ	366
ԼԳԲՏ	776
ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՊՔ	59
Վերցվել է դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ	25

ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՎ-Ի ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ԳԱՂՏՆԻ, ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ
- ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 20 ՐՈՊԵԻՑ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ HUMANITARIAN NON-GOVERNMENTAL ORGANIZATION
ՀՀ, 0001 Երևան, Թումանյան 10, բն. 7
RA, 0001 Yerevan, Apt. 7, 10 Tumanyan str.
+374 60 378989
+374 60 478989
NewGenerationNGO@gmail.com
https://ngngo.net
New Generation Humanitarian NGO
@NGNGOArmenia
ngngo.armenia
ՎԻԴԵՈ-ԻՆՖՈ
ՎԻԴԵՈ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

New Generation Humanitarian NGO

HIV Testing Guide / ՄԻԱՎ-ի թեստավորման ուղեցույց

Տեսահոլովակը ստեղծվել է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:
Տեսահոլովակի բովանդակության համար պատասխանատու է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի տեսակետները:

ՄԻԱՎ և ՁԻԱՀ / HIV and AIDS

Այս տեսահոլովակը ստեղծվել է բարձրացնելու հասարակության իրազեկությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ:
Իրազեկությունը կանխարգելման և արդյունավետ բուժման բանալին է:
Տեսահոլովակը ստեղծվել է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Հետապնդիր վիրուսը ոչ մարդկանց/ Chase the virus not the people

Հետապնդիր վիրուսը, ոչ մարդկանց խորագրով արշավ, 2019թ. նոյեմբերի 23
դեկտեմբերի 1-ը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն է, ինչը նշանակում է որ գործողություններն ուղղվում են ՄԻԱՎ-ի տարածման ու ՄԻԱՎ-ով ապրող անձանց կյանքի որակի բարձրացմանը:

A Lifestory. Nora's Diary / Մի կյանքի պատմություն: Նորայի օրագիրը

Այս տեսահոլովակը ստեղծվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Տեսահոլովակի բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի տեսակետները:

Երջանիկ լինելու իրավունքը / The right to a happy life

Այս տեսահոլովակը ստեղծվել է բարձրացնելու հասարակության իրազեկությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ: Իրազեկությունը կանխարգելման և արդյունավետ բուժման բանալին է:
Տեսահոլովակը ստեղծվել է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Էլթոն Ջոնի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:



Ասուլիս «Հնարավորություններ երիտասարդների համար»

Հայ-գերմանական համագործակցության շրջանակներում Երևան էին ժամանել Բավարիայի երիտասարդական խորհրդի մեր գործընկերները:
Ասուլիսը նախատեսված էր Բավարիայի Երիտասարդական Խորհրդի (BJR) և Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) շարունակական համագործակցության արդյունքում իրականացված և իրականացվելիք երիտասարդական ծրագրերի լուսաբանման համար:

Տեսանյութերը դիտելու համար խնդրում ենք սկանավորել QR կոդերը